


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

Յ. ՓՈՐՈՍԵԱՆ

ԿԱՄԱՆ ԿԱՍ ՈՐ ԵՒ Ե ԳՅՈՒՈՒԹԻՒՆ
ՊԵՏՐ Ե ՈՒՂՂԵՆ ԱՌ
Խմբագր. ԱՐՇԱՆՈՅՍ Բաղրի
ԳԱՅԻՐԷ (Հասցեականի)

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
HABBANIZH LE CAIRE (ÉGYPTE)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳՅՍՏՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկան, ողջ դահլիճ. 60
Վեցամսեայ » 35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ
Տարեկան Պրակտիկ 20
Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԿԵՒ Է
ԵՒ ԲՂՅԱՏԱՐԻ ՕՒՍՈՒՐԸ
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած
գրութիւնք եւ չ'են օրուի:

Ա. Զ. Դ.

Մեր արտասահմանի բաժանորդներէն կը խնդրուի, որ առաջին վեցամսեայն միացնելով երկրորդ վեցամսեայն եւս, հաճին մանսա փօսքի միջոցաւ մեզ հասցնել:

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱՐ

Դոյժը սարսուռ ազգեց ինձի, ինչպէս պիտի ազգէ ամեն զինքը ճանչցողներուն:

Երկաթ... մինչդեռ փետուրի մը պէս կը թուի մեր խանդակաթ թեւերէն և թերեւս կը ստուի շրթներուն եզրերը:

Այդքան մեծ հոգի մը ունենալ և այսքան չքու մեռնել, զոչցէ այս տխուր իրողութիւնը, նախախնամութեան այն սեքմահաճոյքներէն մին ըլլայ՝ որոնցմով կ'ստորէ հայերս քանի մը ատենէ ի վեր:

Ինչո՞ք Պիլեզիկի, դեռ կը յիշեմ իր շրջանաթոյր դէմքը, խարտեալ մազերը, լա՛յնք մե՛ծ ճակատը. բարի նայուածքով աչքերը՝ քրոնց մէջ թախիծ մը կը պահուէր և զորս անգամ մը գիտել բաւական էր անհուն համակրութիւն մը զգալու համար:

Սակայն այդ նուրբ մարմին մէջ, այդ մաշկու գաւապարտուած կուրծքին տակ՝ հրաբուխ մը կար զոր առջի վայրկեանէն իսկ կ'զգայիր:

Ինչո՞ք Երկաթ, ա՛յսքան շուտ...

Ամսոյս Յին Պօլոյ մէջ հոգին աւանդեց Կարապետ Պիլեզիկի որ աւելի ծանօթ է իր Տիգրան Երկաթ գրական ծածկանունով:

Հակառակ բժշկական ամեն գարմաններու, հակառակ պաշտօնի մօր մը գորովագութ խնամքներուն, խեղճ աղան շի կրցաւ հողադրիչ արդ անգութ ճիւղերու:

Թեան ճիրաններէն, և դեռ 29 տարու՝ հողին յանձնեցին այդ մեծ տաղանդը, ճշմարիտ հայրենասէրը և երիտասարդներուն պատուականագոյնը:

Պօլոյ հայ Հռովմէական ծանօթ և յարգուած ընտանիքի մը զաւակ, կարապետ Պիլեզիկի իր ուսմանը առած էր Փրանսայի Արպեռ լը Կոան վարժարանին մէջ խորապէս հմուտ էր Հայկական, Յունական, և անգլիական գրականութեանց՝ որոնցմով զբաղեցաւ մինչև իր վերջին օրերը:

Գեռ պատանի հասակէն իր վրայ ցոյց կուտար գրական զմայլելի յատկութիւններ, մասնաւոր հակու՛մ մը քաղաքական, փիլիսոփայական և հոգեբանական ուսումնասիրութիւններու եւ անըսպելի եռանդ մը օգտակար ըլլալու ա՛յն ազգին, որուն կը պատկանէր:

Փրանսական լրագրութիւնը առջի օրէն իսկ հրատարակեց Տիգրան Երկաթի ուսումնասիրութիւնները Արևելքի քրիստոնէայ ազգերուն վրայ և «Revue des Revues» Բարիդեան այդ առաջնակարգ պարբերականը, իր աշխատակիցներուն մէջ մասնաւոր տեղ մը տուած էր երիտասարդ գրողին:

Ոչ նուազ յարգուած և սիրուած էր Յունաստանի մէջ, երկիր մը՝ որ ամենէն շատ կը սիրէր Հայաստանէն ետք: Իր անունը շատ ժողովրդական եղած էր հոն և կարծեմ միակ հայը եղած է, որ արժանացած է Աթէնքի պատուական քաղաքացիի տիտղոսին զոր քաղաքապետը տուած է իրեն, ի նշան երախտագիտութեան և հիացման որ պատճառած է Աթէնքի ինձեղիկէն մասին, իր Հայերու և Հեղինեներու վրայ արտասանած նշանաւոր բանախօսութիւնը: Բայց ամեն բանէ առաջ և ամեն բանէ վեր ճշմարիտ հայրենասէր մըն էր Տիգրան Երկաթ:

Իր իտէպին էր հայրենիքը ազատ տեսնել և այս գեղեցիկ նպատակին համար ծառայեցուց իր ազգու գրիչը բարձր տաղանդը և զգացումներուն լաւագոյնները: Սիրուած և յարգուած ամեն անգ, անդիմադրելի հուրով մը կը խօսէր մեր խեղճ Հայաստանին վրայ և ահաւայտ սիրել կուտար այդ երկիրը նոյն իսկ օտարներուն:

Հայրենասէրի լաւագոյն արիւնքն էր զոր երբէք ճանչցայ, որուն քով՝ իրենց ամբողջ շինծու կարեւորութիւններն կը կտրւէին այն ամեն հերքանքը, որուն դէպ

սունկի նման մայրեքու եզրերը կը բռնունին չես գիտեր ինչպէս:

Իմակ չէր կրեր, միաներուն պէս, մեր սիրելի Պիլեզիկին, հայրենասիրութեանը հետ զուգընթաց Գլխաւոր իր կենցաղագիտութիւնը: Որքան հայրենասէր նոյնքան մարդասէր էր: Հանրածանցիկ եւրոպիոյ մէջ ինչպէս հոս, սակայն միշտ համեստութիւնը և պարզութիւնը ձեռքէ չէր թողար, որով կրկին սիրելի և յարգելի կ'ըլլար ամեն անոնց՝ որոնք բազմա կ'ունենային իր ձեռքը սեղմելու:

Տիգրան Երկաթի մահուամբ հայ երիտասարդութիւնը անդարմանելի կորուստ մը կ'ընէ: Եւրոպիոյ մէջ ծանօթ հայ գրագէտներու փոքրիկ խումբէն կը պահուի անգամ մը, որուն պակասը լրացնելու համար գոյցէ երկար ատեն սպասել հարկ լիլլայ մեզ:

Այս խեղճ տղերք, դիտեմ, հեռի են «Արշալոյս» ընթերցողներուն երկկայացնելէ ա՛յն վսեմ պատկերը՝ զոչ ուրուագծել փորձեցի: Սպասելով սակայն քրտաբերիկարող գրիչներ այս պարտականութիւնը կատարեն, Եգիպտոսեան ամբողջ հայութեան զգացումներուն թարգման ըլլալ կը կարծեմ, ներկայացնելով սիրելի և ողբացեալ հանգուցելոյն գգալի մօր և եղբայրներուն մեր ամենուս խորին ցաւակցութեան և վշտակից համակրութեան արտայայտութիւնը և վստահեցնելով իրենց մը այժմ դառն կորուստին մէջ ամեն հայ իր մասը ունի, քանի որ այդ մեծ հայրենասէր ամբողջիմ բարօրութեան համար աշխատած և յոգնած էր:

Իր յիշատակը քաղցր պիտի ըլլայ մեզ ամենուս և Տիգրան Երկաթի անունը օրինակելի տիպար պիտի մնայ մեր մէջ ճշմարիտ, անձնուրաց և ազնիւ հայրենասիրութեան:

Ա.

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՇՈՒԲՁ

Ազգային Առաջնորդարանի 98 տարուայ հաշիւները քննելու պաշտօն ունեցող հանուս քննիչ յանձնախումբի անգամներէն Մեծ Տիգրան Կ. Պէրպէրեան հետեւեալ նամակը գրկած է մեզ, որուն հրատարակութիւնը բաւական լոյս պիտի սփռէ Ազգ. Առաջնորդարանին վրայ:

գարանի խոյուններուն մէջ անցած գարածաներուն վրայ :

Տիար Հ. Կ. Պէրպէրեան ձեռնհաս և քաջ Հաշուագէտ-Տոմարակալ մ'է և նոյնչափ ալ անկողմնակալ, ինչպէս բոլոր զինք ճանչցողները կը վկայեն. հետեւաբար այս առթիւ իր գրածները մեծ կշիռ և արժէք պէտք է ունենան տեղական ազգային գործերով հետաքրքիր ելուցներուն համար :

... Խմբագիր

«Արշալույս»ի 37րդ թուոյն մէջ Ազգային խորագրին ներքեւ «մեզ լուր կը տրուի» ձեւին տակ կարգ մը դիտողութիւններ ներկայացուցած էիք տեղւոյս Ազգ. Առաջնորդարանին 1898 տարւոյ հաշուոց քննութեան համար կազմուած քննիչ յանձնաժողովոյ անդամոց մասին եւ քննութեան յապաղման պատճառները կը պրպտէիք :

Որեւէ պատճառ մը չունիմ չ'հաւատարու համար թէ արդէն այդ անդամներն Ձեզ ծանօթ են, ինչպէս նաեւ Ձեզ նման շատեր ալ կրնան ճանչնալ զանոնք. հետեւաբար ինձ հարկ անհրաժեշտ կը նկատեմ հրապարակաւ պատասխանել Ձեր դիտողութեանց իբր անդամ նոյն քննիչ յանձնաժողովոյ. միայն թէ աւելորդ չեմ նկատեր այս առթիւ յաւելուլ թէ Ձեր յիշած եզրակարգի նշանաւոր առածին եթէ ո՛չ բառական իմաստը, գէթ ոգին ըմբռնելու չափ ի վաղուց անտի եզրակարգի հաստատուած ըլլալու պատիւը չունիմ :

Փաւստոս Պատկ. Ընդհ. ժողովոյ Դիւանին, ինչպէս նաեւ Առաջն. Փոխ-տեղապահին կողմանէ ստորագրեալ պաշտօնագիր մը ստացայ, Յունիս 19 1 Յունիս թուականով, որմէ կը տեղեկանայի թէ 1898 տարւոյ հաշուոց քննութեան համար երեք անձերէ բաղկացեալ Յանձնաժողով մը կազմուած էր. թէ՛ անոնցմէ երկուքն հրաժարած էին, եւ մին միայն՝ Քոյն է փաստաբան Յակոբ Էֆ. Ասատուրեան ընդունած լինելով այդ պաշտօնը, ինձմէ կը խնդրէր միանայ Ասատուրեան Էֆ.ի (1) և կատարելով քննութիւնը, արդիւնքը տեղեկագրելու որ անկ է :

Յօժարութեամբ ընդունեցի առաջարկեալ պաշտօնը, ինչպէս որ պարտաւորութիւն է ամեն ազգային անհատի՝ իւր կարողութեանց չափով սատարել ազգային գործոց. եւ Դիւանի կողմանէ մտք նշանակեալ օրինյ՝ Առաջնորդարան ներկայանալով, Ասատուրեան Էֆ.ի հետ սկսանք խօսի մտք կատարել հաշուոց քննութիւնն. Առաջին օրերուն մէջ մեր եռանդը չափ չունէր, ճշմարտութիւն մը խոստովանած ըլլալու համար կ'ըսեմ, եւ քանի մը նիստերու մէջ ըստ բաւականին յառաջացած էինք հաշուոց քննութեան մէջ, ինչպէս որ առեւտրութիւններն կը ցուցնեն (2) :

Միայն թէ ասկէց գրեթէ 2-3 ամիս առաջ երկիցս Առաջնորդարան գացի մեր պաշտօնին շարունակութեան համար, առաջին անգամ Ասատուրեան Էֆ. բացակայ գտնուեցաւ. երկրորդ անգամ Ասատուրեան Էֆ. ի գործերու շատութեան պատճառով քննութիւնը մէկ քանի նիստ յետաձգել որոշուեցաւ, սա պայմանով որ Առաջնորդարանէն ինձ լուր պիտի տրուէր յետոյ գումարուելիք նիստերուն օրերը. այն օրէն յայտարարեմ եւ զեռ լուր մը ստացած չունիմ (3) :

(1) Ասատուրեան Էֆ.էնտի հաշուքննիչ յանձնախումբի անդամ ընտրուած ատեն Ազգ. Առաջնորդարանի փաստաբան կարգուած էր արդեօք Տիար Պէրպէրեան այս մասին բան մը գրած չէ իր նամակին մէջ :

(2) Մինչեւ այդ օրը Առաջնորդարանի Դիւանագիրքը՝ ինչպէս կ'երեւի, կուսած ըլլալու չէ՛ թէ Տիար Պէրպէրեան շատ անկողմնակալ ոգի մը կը կրէ. եթէ այդ գիտնար, ինքզինքը վտանգաւոր գիրքի մը մէջ չ'դնելու համար, թիւրուս պիտի ջանար եւ նոյն իսկ յաջողէր համոզելու եւ ետ կեցնելու. ամեն անոնք, որ այդ պաշտօնը Տիար Պէրպէրեանի յանձնելով, զինք ձախորդ վիճակի մը մէջ կը գնէին :

(3) Այն օրէն վերջ ալ, արդէն միայն Առաջնորդարանի եւ անոր քանի մը սինակալէր ու հաճոյակատար պաշտօնեաներու կողմէ ընդունուած

Ահաւասիկ թէ ինչո՞ւ քննիչ յանձնաժողովը իր պաշտօնին մէջ թերացած է: Կը յուսամ թէ այսքան բացատրութիւն որ արդէն բաւական երկարեցաւ, կը բաւէ, ըստ Ձեր կարծեաց (4) գայթակղեալ մտքերու գոհացում ալ :

Խնդրելով որ Ձեր թերթին մէջ անկիւն մը չնոր-հել հաճիք ներկայ գրութեանս, կանխաւ ընդունեցէք եւ այլն :

8 Դեկտ. 99

Հ. Կ. Պէրպէրեան

ԵՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱՐԵՐ

Բարիք, 1 Դեկտ. 99

Երգիչ Պ. Լեոն Եղիազարեանը ձեռնարկած է Բարիքի մէջ հրատարակել հայերէն բոլոր ժողովրդական երգերու հաւաքածոյ մը: Տպագրութիւնը յանձն առած է Բարիքի ամենախառնի տպագրիչ՝ Էմօֆ — որը միայն ամենայայտնի երգահաններու գործերն տպագրելու յանձն կ'առնէ — իսկ տպագրութեան ծախքը՝ որ շատ մեծ պիտի լինի յանձն առած է մեր հարուստ ազգայիններէն և իւր առատաձեռնութեամբ յայտնի Պ. Առաքել Մատուրեանը: Մենք պէտք չունինք շեշտելու այդ հրատարակութեան օգտակարութեան վրայ. ամէն ոք կը զգայ թէ ո՛րչափ մեծ պիտի լինի այդպիսի հրատարակութեան մը բարոյական ազդեցութիւնն ու շահը: Հայերէն բոլոր եղանակները ձայնագրուած են և ներդաշնակուած Ռէյէնի, Վէնսան տ'Ինտի, Պուրկօ Տիւրուարէյի, Շառլ Պոստի, Մէքքէրլինի, Ժօրժ Մարթիի, Կաղաչէնքոյի, Վիշնիաքի նման Ֆրանսացի և Ռուս երգահաններէ, որոնք այսօր միւլդիքական աշխարհին փառքերն են: Երգերու խօսքերը թարգմանուած են ֆրանսերէնի, իտալերէնի, անգլիերէնի, գերմաներէնի և ռուսերէնի և այնպէս յարմարցուած են որ այդ ընդունները ներկայացնող ազգերու անհատներն պիտի կարող լինին, հայերէն եղանակով հայերէն թարգմանուած բանաստեղծութիւն մը երգել իմ այս թղթակցութիւնը ձեզ հասած ժամանակ արդէն առաջին գիրքը ըյս կը տեսնէ, որուն արդէն փորձերը երեք օր առաջ տեսանք: Ամբողջ գործը պիտի բաղկանայ 6 գրքոյիներէ, որոնք երկու ամիսը անգամ մը պիտի հրատարակուին: Գնել փափաքողները կարող են դիմել Պ. Լեոն Եղիազարեանին ի Բարիք, 48 rue de Douai: Մենք ուրախ ենք այդ հրատարակութեան ըյս տեսնելուն վրայ, վասն զի եւրոպական հասարակութիւնը թղթատելով այդ ընդարձակ հրատարակութիւնը պիտի կարենայ

հակասութիւններով լի, նորահաստապօրինութեանց օրէնքներուն համաձայն Տիար Պէրպէրեան ազգային անհատ չէր (ազգային տուրք վճարողներու ցուցակին մէջ արձանագրուած չէ իր անունը) ուստի սխալ չէ նշանակել թէ այդ պատճառաւ վերստին կանչուիլ հարկ դատուած չէ: Ինչպիսիք Առաջնորդարանի Դիւանագիրք յորջորջող խոչոր չունէ մը եւս թող առնէ. այս անգամ ալ դոնէ ազատեցաւ . . . :

(4) Եթէ կարծիքը միայն մերն էր, հարկ չէր մնար ուրիշ միջոցներու դիմել. Տիար Պէրպէրեան տուած պատասխանով կը հաստատէ թէ միմիայն մեր միտքը չէ գայթակղածը այլ շատերուն :

գնահատել հայուն ժողովրդական արուեստը որ այնքան սեփական և այնքան արտայայտիչ է իւր պարզութեան մէջ: Պարոն Եղիազարեան ուրիշ շատ մը ազգագրութեան գաղափարներ ունի, զորս պիտի ջանայ գործադրել, մենք բոլորով սրտիւ յաջողութիւն կը մաղթենք թէ իւր ապագայ ձեռնարկներուն և թէ ներկայ հրատարակութեան համար, որն արդէն եղած լինցած բան մ'է:

A. S. ԵՒ Մ. Ս. ԿԱԿԻԹ ԲԷԿ

ԶՕՐԱՎԱՐ ԺՈՒՊԷՌԻ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ

Տեօյ Չայքունկ գերմանական թերթը հարաւ. Ափրիկէի պատերազմին վրայ Չօրավար Ժուպէռի մէկ նամակը հրատարակած է: Այդ նամակը Լէյտիսիթի առջև գտնուող բանակաղէն զրկուած է և հոկտ. 27 թուականը կը կրէ: Չօրավար Ժուպէռ այդ նամակին մէջ կը պարզէ ձէյմսընի ծանօթ շահատակութեամբն յառաջ եկած ձգտեալ վիճակէն՝ ի վեր թրանսլալի ըրած սպառազինութիւնները և անդրիական զօրագունքերուն ուժը: Մինչև իսկ, կըսէ, եթէ մենք չը յաջողինք, Չօր. Պիւլլըրի հրամանին տակ գտնուած անգլիական գունդերուն իրարու միացման գործողութիւնը արգիլել, այդ գունդերը բնական պատճառներով ա՛յնքան տկարացած պիտի ըլլան, որ անգլիացիք պատերազմելու կարող վիճակի մէջ հազիւ 33,000 հոգի պիտի ունենան մեզի դէմ գնելիք:

« Չօրաբաժնին մնացած մասը ՚ի հարկէ պիտի գործածուի զօրաց կայանները և անցքերը պաշտպանելու: Ասկից զատ՝ գործողութեանց ամբողջ խարխիւր 700 քիլօմէթր է — նախալի հետ Բարեյուսոյ գլուխը ևս հաշուելով :

« Պէտք է նկատի առնուլ թէ մեր զօրաց կայանները մեր հայրենի հողին վրայ կը գտնուին՝ երեք տարբեր ուղղութեամբ հաստատուած, և սրոնք պաշտպանելու համար 300 հոգի կը բաւէ: Մեր զօրաց բոլոր կայանները միմեանց հետ հաղորդակցութեամբ կապուած են. եթէ անոնցմէ մին ծանր վտանգի մէջ գտնուի, և կարելի չըլլայ հոն տեղի պաշարն ու ռազմամթերքը դիւրաւ ազատել՝ ամենքն ալ պիտի քանդուին ու ջնջենք:

« Պաշտպանողական պատերազմ մը — թէ և այժմ՝ ատոր վրայ պէտք չունինք տակաւին խորհելու — անուշտ աւելի մեծ առաւելութիւններ կընծայէ մեզ քան թէ յարձակողական պատերազմ մը:

« Թրանսլալի, և կամ Օրանտի բարձունքը՝ մենք մեր երկրէն մէջ ենք, և Անգլիացիք իւրաքանչիւր բթաշափ գետնի համար պարտաւոր են մեզ հետ կռուիլ անլուր դժուարութեանց միջև և միշտ երկու կամ երեք կողմէն միանգամայն պատերազմելու հարկադրուած են, քանի մը ամիս միայն պիտի կրնան տուկալ: Պօէրները արդէն ոտքի վրայ 30,000 հոգի ունին պատրաստ. այնպէս որ նախալի և Բարեյուսոյ Պօէրներուն կողմէն աստատութեան մը վրայ յուսադիր ըլլալու հարկ չկայ:

« Իսկ եթէ Անգղիացիք ընկնեն զի- նելով Պօէրներուն զէմ կուռելու գրդին, անտարակոյս Աֆրիքանտէրներու ընդհանուր ապստամբութիւն մը պիտի ծագի » :

Հ Ե Ռ Ա Պ Ի Ր

Աժանս Ռիթէր Ծրեւէն կիմանայ ամսոյս ութը թուականաւ քաշուած հեռագրէ մը, թէ՛ փայտէ կամուրջ մը շինուած, լինցած է ու նայնը անց ու դարձի համար բացուած է :

— Ուրբաթ օրուան թուականաւ ժուպէտի բանակառեղէն հեռագիր մը կիմացնէ թէ Անգլիա- ղիները յարձակմամբ առին Լոմպամուսգոյրը եւ գրաւեցին Մագսիթի թնդանօթ մը :

Լէնսըրս Հիւսարները եւ Կարտները, Լէյտիս- միթի արեւմտեան կողմը, արշալուսին դուրս ել- լելու փորձ մը ըրին, հրետանին կրակին պաշտպա- նութեան տակ Պօէրներուն թնդանօթները պա- տասխանեցին, Անգղիացիները անմիջապէս Լէյտիս- միթ քաշուեցան :

Տեղակալ Թրիսթրամ եւ 3 նիզակաւորները վիրաւորուած եւ բանտարկուած են Ազատ պե- տութեան Պիւրկէրներու կողմէն :

— Յաջորդ հեռագիրը ընդունուած է զօրավար Հուսթիէն Գ թուականաւ Երէկ իրիկուն Հրնքր 500 կամաւորներով եւ Լայք հօսի գունտէն 100ի չափ մարտիկներով զրկեցի Պօէր մարտկոց մը յանկարծ գրաւելու համար : Այս գործողութիւնը յաջողութեամբ պատկուեցաւ : Թնդանօթ մը եւ ուրաւի մը (obusier) գերի առնուած եւ Լէյտիս- միթ բերուած են : Անգլիական կորուստը եղած է, զինուոր մը մնացած եւ հազարապետ Հրնքրսըն վիրաւորուած : Միեւնոյն ժամանակ Պօէրներուն հեռագրական թելերը կտրեցին, եւ անոնց վրան- ները կրակի տուին :

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կուգամ հրապարակաւ յայտնել իմ խորին շնորհակալութիւնն առ օրինագէտ փաստափան Տիար Խոսրով Ջօհրապի, որ իմ Պէն-էլ-Սուրէնի մէջ եզոզ վաճառատանս նկատմամբ բացուած զատը յաջող եղա- նակաւ չահելէ, եւ ծախքեր ու մնասնորս ըստ օրինի առնելէ վերջ, երկուստեք հա- մաձայնութիւն գոյացնելով իմ փափաքածիս չափ դեռ նստելու պայմանաժամ մը ստո- րագրելու յաջող ելքը գտած է, Կորոյ համար իմ մասնաւոր գոհունակութիւնս կը յայտ- նեմ հմուտ փաստաբանին, եւ այս առթիւ կը համարձակեմ յարգելի ազգայնոցս եւ ծանօթացնել յիշեալն, յուսալով թէ ամեն կերպիւ գոհ պիտի մնան իւր եւրոպական եւ տեղական օրինաց մասին ունեցած հմուտ- թեանէն : Եւ թէ միանգամայն իւր չափաւոր պահանջումներէն :

Պ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Գահիրէ 8 գեկտ. 99.

ՔՈՒՍԱԿԵՐՈՒԹԻՒՆ

(Շար. Դնախորդ թիւէն եւ վերջ)

Բուսակնիք՝ իրենց վարդապետութեան իրրեւ զօրաւոր ուրիշ մի փաստ հետեւեալ համեմատու- թիւնը կ'առաջարկեն : «Առէ՛ք, կ'ըսեն, 1. մէկ շիլիննոց եզի կամ ոչխարի միս եւ 2. մէկ շիլին- նոց մանրուած լուբիս, սոպ, ոլոն (պեղելիս) աարալուծեցէք եւ պիտի տեսնէք որ առաջնոյն անդարար նիւթը այնպէս է երկրորդին անդարար նիւթին, ինչպէս է Յր 19ին :

Ընդհանուր առմամբ անմխտելի է որ միւսը ըստ ինքեան հրապարիչ բան մը չունի : Պէտք է զայն կեր արանափոխել երկուսով եւ շատ մը հնարքով, որպէսզի ակնորժանս ըլլայ :

Անգլիոյ թեան եւ վարդապետութեան անյուր զարգացում մը կ'ենթադրէ մասկերութիւնը ընդ- գէմ զգայուն եւ թերեւս խիստ բարձր աստիճան զգայման տէր արարածներու Հանրածանօթ բան

մ'է որ մագործները եւ մանաւանդ սպանդանոցի մէջ ծառայողներ, անողորմ, բռնարարոյ եւ վայ- րագ դատակարգ մը կը կազմեն : Արդարեւ կրնան այլակերպ ըլլալ, երբ ամէն ոք գիտէ այդ նողկալի մարաններու մէջ անցած դարձածը, թէ ինչպէս հազարաւոր ոչխարներ, գառնուկներ, հորթեր կը մորթուին, եւ տակաւին զողողուն՝ մորթագերծ կ'ըլլան եւ կը յօշոտուին :

Բուսակներու վարդապետութիւնը յենած է հետեւեալ տասնեւութը պատճառաբանութեանց վրայ :

Ա. Մարդս մրգակեր է 'ի բնէ : Անոր ակոս- ներն ու անդամազիտական յատկութիւնքը միեւ- նոյնն են ինչ որ են բուսակերիները : Ենաստաներ ունի բայց խիստ տարական : Մարդս ոչ խոտա- կերներու երկայնաձիգ եւ բազմազան աղիքն ունի եւ ոչ մասկերներու տոպրականման ստամոքսը, ահազին լեարդը եւ կարծուկ աղիքը : Գասէնտի, Լիննէ, Տօպէնթօն, Գիւլիէ, Լաուրանս, Պէլ, Օսէն եւ ընդհանրապէս բոլոր անդամազէտներուն յան- գած բանաւոր եզրակացութիւնը այն է թէ սոսկ բուսային անդամութեամբ կ'ստացուին այն ամէն նիւթերը՝ որոնք հարկաւոր են մարմնոյն վերա- կազմութեան, եւ թէ մարդուս համար ամենէն կատարեալ կերպով փոխարկելի, ամեն տեսակէ- տով նուազագոյն վտանգաւոր, ջերմութեամբ եւ զօրութեամբ ամենէն հարուստ ուտելիքը բուսա- յին ուտելիքն է :

Բ. Մտի մէջ չկայ փոխարկելի նիւթ մը, որ բոյսերէ առնուած չ'ըլլայ : Միտը՝ գուրկ ըլլալով շաքարէ եւ նշայէ՛ թերի եւ անկատար օւտելիք մ'է : Այլուրը, պտուղները, հոռնտերը կը պարու- նակեն ոչ միայն այս անհրաժեշտ նիւթերը այլ նաեւ մտի բորակածին (nitrogène) տարրերը, յաճախ աւելի մեծ քանակութեամբ, Լիէպիկի աշխատութիւնները հաստատեցին որ զգալի տար- բերութիւն մը չկայ բուսական բ' անեարդի (fibrine) եւ կենդանական բնասնարդի, բուսական բնասպիտի (albumine) եւ կենդանական բնասպիտի մէջ :

Գ. Ամենանպաստաւոր պայմաններու մէջ ան- գամ մտի մէջ անվրէպ կը գտնուին անմաքուր եւ վտանգաւոր նիւթեր, որոնցմէ՛ երկուքը միայն յիշենք. մազանման երակներու (capillaire) մէջ մնացած արիւնը, եւ մեռնելու պահուն ապական- ուելու վրայ գանուող անդամազիտական տարրերը : Վտանգի այս անընթաց մկզբնապատճառներուն վրայկրնամք յաւելուլ արտաժին ժահրերը (virus) հիւանդութիւնները եւ մակարոյծ կենդանիները (parasite) որոնք հարեւանցի եւ հակիրճ քննու- թեան մը տակ 'ի հարկէ չեն իյնար :

Դ. Ընդհանրապէս ընդունուած է որ մեծ քա- ղաքներու մէջ մորթուած եւ սպառուած անաս- նոց գէթ մէկ չորրորդը հիւանդոտ է անբուական կամ չափազանց անուցման պատճառաւ եւ կամ վարակմամբ : Եզի եւ ոչխարի հիւանդութեանց մեծագոյն մասը փոխանցելի է մարդուս, ի միջի այլոց ժանտախտը, օձացաւը, թոքախտը, կողա- թոքատապը (սաթլըճանլը հիոմմա) արջառական ժանտախտը եւ այլն :

Ե. Բոլոր բուսակերները միաձայն կը յայ- տարարեն որ խիստ քաջատոջ վիճակի մէջ են, քան ինչ որ էին մասկերութիւնը չ'ձգած, շատ պարագաներու մէջ բուսակերութիւնը կը բաւէ անհետացնելու համար կաթնածը, յօղա- ցաւը վիրնտութիւնը, անդամազէտութիւնը, մոր- թային հիւանդութիւնները եւ այլեւայլ արտերը : Վէրքերը եւ վիրաբուժական գործողութեանց հետե- ւանքը քիչ ժամանակի մէջ առողջացնելու ամե- նանպաստաւոր մի ոչն է : Բուսակերի մը հետախ- տէ բռնուիլը տեսնուած բան չէ :

Զ. Ալբորտիկանութեան վտանգները հանրա- ծանօթ են. արդ, ստոյգ է որ՝ ի սկզբանս ալբորա- խառն ըմպիլեաց հակուժը համեմատական է կեր- ուած մտի քանակութեան, եւ կը բաւէ ալբորա- մոլ մը բոյսերով սնուցանել, որպէսզի իր ցաւալի սովորութիւնը անզգալաբար ձգէ :

Ե. Բուսակերութիւնը ամենանպաստաւոր է վարքը մաքրելու, միտքը բարձրացնելու, բնաւո- րութիւնը քաղցրացնելու, եւ հետեւաբար՝ ընկե- րական կենաց ներդաշնակութեան եւ խոզաղա- սիրութեան առաջնորդելու : Անհաստական եւ խոզ- րովին ֆիզիքական քարոյական եւ մտաւորական ստողութեան լաւագոյն պահպանն է :

Ը. Բուսակերութիւնը գերազանցապէս նպաս- տաւոր է եւ ֆիզիքական գեղեցկութեան՝ զէմքին եւ մարմնոյն շարժումներուն փափկութեան եւ թե- թեւութեան յատուկ հանգամանք մը տալով կամ երեսի գոյնին եւ մորթին մասնաւոր փայլ մը հաղորդելով : Ա.տան Սմիթ երկայն ժամանակէ 'ի վեր ուշադրութիւն հրաւիրեց սա իրողութեան վրայ թէ՛ Մեծն Բրիտանիոյ գեղեցկագոյն կիները, բացարձակապէս գետնախնձորով սնուցուած Իր- լանտացուհիներն են :

Թ. Մարդկութեան նախատարրական զգաց- մանց զայրոյթ կը պատճառեն սպանդանոցներու մէջ գործուած անգլութիւնք եւ խոզութիւնք :

Ժ. Ընկերական կեանքի մէջ անարդարու- թիւն է ամէն օր անասուններ մորթելու դատա- պարտել մարդկային դատակարգ մը. եթէ իւրա- քանչիւր ոք ստիպուած ըլլար ինքն իր ձեռքով մուցնել եւ յօշել իր ուտելիք միւսը՝ գրեթէ ապա- հով կրնայինք ըլլալ որ խիստ քիչ ժամանակէն մարդկութիւնը բուսակերութեան պիտի վերա- դառնար :

ԺԱ. Միեւնոյն ընդարձակութեամբ հող մը՝ յատկացնելով արմատաց եւ մրգաց մշակութեան՝ կրնայ անուցանել խիստ աւելի մեծ թուով մարդ- կային էակներ. քան անասնաբուծութեան յատ- կացուելով :

ԺԲ. Նոյն հողը՝ առաջին պարագայի մէջ՝ աւելի մեծ թուով մարդոց դործ կը հայթայթէ, քան երկրորդ պարագայի մէջ :

ԺԳ. Բուսակերութիւնը վեցապատիկ կամ եօթ- նասպատիկ աժան է քան մասկերութիւնը — ար- զիւնքի հաստարութեամբ :

ԺԴ. Ամենէն հուժկու, ամենէն սրտոտ, ամե- նէն համբերատար եւ իբրեւ օգնական մարդուս ամենէն օգտակար եւ միշտ անոր աշխատութեանց եւ յաղթութեանց ընկերակցած անասունները խո- տակեր են : Ո՞րպիտի ծառայութիւնք կրնան բաղ- դատուիլ ձիու, եզի, փիղի, ուղտի մատուցած ծառայութեանց հետ :

ԺԵ. Ամենէն կորովի, ամենէն աշխատասէր եւ անխոնջ ժողովուրդները անոնք են, որոնց քով բուսակերութիւնը յարգելի է : Վարսակի խիւսով (եռլաֆ լաբաթ) անուցուած սկովոնիցին, գետ- նախնձորով սնուցուած իրլանտացին, միջին հաշուով աւելի բարձրահասակ եւ զօրաւոր են քան Անգ- ղիացին : Միեւնոյն կլիմայի տակ մտակեր էսքի- մօն ամենախեղճ հասակ մ'ունի, մինչդեռ բացար- ձակօրէն բուսակեր Ֆինացին կը հաւասարի շուէ- տացիներուն եւ նոյնվէկիացիներուն հասակին : Օվկանիայի շագանակակեր գիւղացին, փոխիք (գարիի ալիւրէ լաբա) ուտող իտալացին, սորատէր սպանիացին, ասիացի զինուորը, չինացի պարտիզ- պանը, ալճէրիացի բեռնակիրը հոշակաւոր են իրենց տոկունութեամբ. այս անձինք տարին երեք անգամ միս չեն ուտեր : Գոպտէն բաւ է որ գաղղիացոց հարստութեան բուն աղբիւրը անմիս ապուրն է :

ԺԶ. Սպարտացիք որոնք իրենց դիւրեային ուժով, կորովի բարոյականութիւնով եւ քաջու- թեամբ պատմութեան մէջ մեծ տեղ մը գրաւած են, բուսակեր էին չ'ունեցողք : Այլ բուսակեր էին՝ իրենց մեծութեան ժամանակը Բուսակերու- թիւնը լրացուցիչ մասը կը կազմէր ըմպական այն կանոնադրութեան, որ կը գործադրուէր Յու- նաստանի հրապարակական խաղերու մէջ : Այս ազգերը հաղիւ յարեցան մտակերութեան եւ անս զանգաղութեան մէջ ինկան եւ նուաճուեցան :

ԺԷ. Բազմաթիւ համբաւաւոր անձինք բուսա- կեր էին : Ի միջի այլոց կը բաւէ յիշել Սաքիա Մոնի, Պիւթագոր, Ուէնէք, Բիւլետարք, Յուլիանոս կայսր, Կասէնտի, Միլթօն, Նիւթօն, Լիննէ, Բար, Ռուսօ, Վոլթէն, Չէսթըր Ֆիլա, Տրանքլին, Պէր- նարտէն, տը Սէն Բիէն, Շէլլի, Պիրօն, Սթիւլ- Լամարթին, Միլլէ :

ԺԸ. Նկատելով որ բուսակերութիւնը մէկ կողմէն ամենարնական, ամենաառողջ, թէ՛ գինե- մոլութեան եւ թէ՛ ուրիշ բոլոր մոլութեան ամե- նահակառակ է եւ միւս կողմէն մտաւորական կարողութեանց զարգացման ամենանպաստաւոր արիւնհեղութեան եւ բռնաբարութեան ստեղծու- լու ամենապարմար, ամենապարզ, ամենաաժան է, անոր չ'յաշխիլ խնդրութիւն, թերեւս ոճիր մ'է :

Գահիրէ 30 Նոյ. 99

Թարգմ. Պ.

ՕԳՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՈՐԲԻՎՆԵՐՈՒՆ

Ի նպատակ շնորհակալության համար... թերթին հարկադրված է...

Բազմալիցա այս բացատրիկ լայնածառալ մեծ թերթը պիտի հրատարակուի իբրև անդրանիկ «Հայ պատկերազարդ թերթ» մը Illustration arménienne...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

Պիտի տպուկ մի քանի հազար եւ սղակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն...

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻԹԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՓՕՆՕՎՐԱԾ

Գ.Ա.Հ.Ի.Բ.Է. - Մուսի փողոց, - Գ.Ա.Հ.Ի.Բ.Է.

Ս. եւ Ս. Սեմավիի վանպահանգի դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնօլի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՅԻՔ ՀՈՆ եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար գանաղան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղափանդազարդ, ոսկի, արծաթ եւ ցիւրի:

Ֆրանսական եւ ամերիկեան ապրանքամանաքներ տեսակներէն զարդեղներ, շորագներ, օգիտ, մասագիներ եւ այլն:

Ս.մ.ն տեղակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

39-50

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Ամենափափուկ ստամոքս ունեցողներուն համար:

Մի' ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու եւ վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու սուրբ լուծիչներէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարմնութիւն կը պատճառեն եւ հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կընեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն եւ հետեւաբար բժշկաց յաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ դիմել:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՐ

Յռօգի Պափ վանառասան մօտեք, Կաթե-էլ-Պեմպի ճիւղ դիմացը

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փութին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ եւ անխարդախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փութին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական եւ յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի եւ կաթի պարսիմաթները կային:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրութեամբ եւ փութով կը կատարուին: 13-50 Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՄԻՆԵԱՆ

ԱՍՏԻԿ ԷՍՄԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼՍՈՅ

ՀԱՅ ԲԻՒՐԲՃԻ ԱՐՇԵՍԱԻՈՐՆԵՐԷՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳԸ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄՄԷՏ ԱԼԻ

ՊԱՊԷԼԻՆՍԻԿ

Ամեն տեսակ հին եւ նոր մուշտակները եւրոպական եւ թուրքական ֆաշակով ձեւի կը բերէ եւ նորի կը վերածէ:

Իրեն դիմող յարգելի յաճախորդները պատրաստ պիտի գտնեն նաև մուշտակ օձիքներ կ'ըն:

Անոնք որ իրենց հինցած մուշտակները տանը մէկ անկիւնը նետելով ցեցերու կեր կ'ընեն, կընան այս առիթէն օգտուիլ:

9-8

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԵԹ-ԷԼՂԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (րաստրդ) սեւ, շագանակագոյն եւ ոսկեգոյն: Սեւ ներկ շիշով վաճառուած պէտք չունի: Սոյն ներկերու սեւեղութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափոխութիւնը կը դադարեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մազ կը բերէ: 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած եւ հիսնամիտ արդիւնք տեղեկուած է: Երբ 10 զրշ ող (2 1/2 ֆրանք):

Վերոյիշեալ ջուրէն կը գտնուի նաև Աղէք-ամեղրիա Սիքքէ-Պեթիտ մանրավաճառ Պ. Լեոն Ազանեանի մօտ:

Ակուայի փոշի եւ ջուր. մին մաքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են ճակատ առ տակաւ թափիլ եւ օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գտնենք կը վաճառենք եւ կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակադրոշմները: 4 9-8

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

Վկայեալ տեղական կառավարութեան եւ բժշկական վարժարանէն:

Իւր բնակութիւնը հաստատած է Ի Շարա Ապտիւլ-Աղիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը եւ տեղական կիրմայի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն դիմողները կատարելապէս գոհ պիտի մնան:

Le Gérant Dr A. B. HAQOPIAN

ՀԷԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԵՐԱԿԻ 10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1899

Table with 2 columns: Category and Amount. Includes rows for 'Ա. Թիւ 8862', 'Բ. 3243', 'Գ. 9535', 'Դ. 394', 'Ե. 3274'.

Table with 6 columns: Numbers. Includes rows like '1224 5187 5544 4845 7749 7572'.

ԵՄԱՆՈՐ. — Այն շահող թիւերը որոյ վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գտնուիր, ընկերութեան սնտուկին սեփականութիւնը կը լինին:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԻՈՐ ԴԱՍԵՐ
ԶԱՓԱՀԱՍՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ
ԹՅԱԶՈՒՅՑԵՆ

Գանատանդութիւնք սկսած են նոյեմբ. ամսոյ 6 էն սկսեալ՝ երեկոյնները ժամը 7 էն մինչև 9 1/2 եւ կ'աւանդուին Անգլ. Գաղղ. Արաբերէն եւ Հայերէն դասեր:

ՎԿԱՑԵԱԼ ԱՂԲՅՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
ԳՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԻՔ ԶՐԻ ԵՆ

Դիմել առ Մ. Յ. ԳնԱՃԱՆ Հիմնադիր-Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց: